# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2026 թվականի N 1110-Ա

## ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներովև հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորևբերված աղյուսակումնշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/23 | 1 | Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 1/32 հողամասում ժամանակակից այգու հիմնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | 2000000 | «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ | 06956374 | ք.Վանաձոր,Երևանյան խճ.147/1 բն.33 | 23.03.2026թ | Մեծամորի համայնքապետարան | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ | «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է բոլոր մասնագետների էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, համաձայն՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներին:Բացակայել է բանկային հաշվից քաղվածքը:Բացակայել է Խաչատուր Գրիգորյանի դիպլոմը:Դրանով պայմանավորված 2026 թվականի մարտի 19-ին գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանություն/ներ/ը: Այնուհետև՝ 2026 թվականի մարտի 23-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, մասնավորապես՝ «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով ներկայացված տեղեկանքը մասնակցի բանկային հաշվի/հաշիվների/ մնացորդի վերաբերյալ կամ քաղվածքը բանկային հաշվից/հաշիվներից/ հայտը ներկայացնելու կամ դրան նախորդող օրվա դրությամբ, համաձայն Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների: |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի ապրիլի 27
ք.Մեծամոր